**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

**<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>**

**ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝** ԳԲՔԱ-ԼՕ-2020/86, 24.07.2020թ.

**Բողոք բերող անձ՝** «Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ

**Պատվիրատու՝** «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ

**Գնման ընթացակարգի ծածկագիրը՝** «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/18» գնանշման հարցում

**Գնման առարկան՝** քիմիական նյութերի ձեռքբերում:

**Բողոքի պահանջը՝** պարտավորեցնել՝

1. «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/18» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 22.07.2020թ թիվ 1 որոշմամբ «Մեդպրո» ՍՊԸ-ին 2-րդ չափաբաժնի մասով հաղթող մասնակից ճանաչելու որոշումը,
2. «ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ-2020/18» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 2-րդ չափաբաժնի մասով «Մեդպրո» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը,
3. քննարկել մեր ընկերությանը 2-րդ չափաբաժնի մասով հաղթող մասնակից ճանաչելու հնարավորությունը:

**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ**

**ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ**

**Նիստերին կարելի է առցանց հետևել** https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

"ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ և Ա Կենտրոն"
ՍՊԸ
Բժշկական, լաբորատոր և անալիտիկ
սարքավորումներ

"PINK FLAMINGO B & H Center"
LTD
Medical, laboratory and analytical
equipment

Սարյան փող. 1ա, բն.3, Երևան 0002, ՀՀ: Հեռ./ֆաքս. (+374-10) 539046, E-mail: mels@arminco.com
1a, Saryan str., apt. 3, Yerevan 0002, Armenia. Tel/fax: (+374-10) 539046, E-mail: mels@arminco.com
URL: http://www.spyur.am/pinkflam.htm

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին
**Բողոք բերող՝ »Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ**

ք .Երևան ,Սարյան 1ա,բն 3

mels.baghdasaryan@gmail.com

հեռ՝ 010 539046

բջջ՝ 091 214 176

**Պատվիրատու՝** «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ
Ք.Արտաշատ Ա.Խաչատրյան 116
artashatbk-hivandanoc@mail.ru

**Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝**
<<ԱՐՏԱՇԱՏԻ ԲԿ>>ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ «ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ» ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ - 2020/18 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ

**Բողոք**

<<Արտաշատի Բժշկական Կենտրոն>> ՓԲԸ-ի կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ - 2020/18 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտերի հիման վրա 2020 թվականի հուլիսի 22-ի թիվ 1 որոշմամբ հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները որի համաձայն հաղթող մասնակից է ճանաչվել 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով **Մեդպրո ՍՊԸ**-ն:

22.07.2020թին տեղի է ունեցել մրցույթի բացումը:

23.07.2020թ –ին հրապարակվել է անգործության վերաբերյալ ծանուցումը:

Առաջարկվել է անգործության ժամկետից հետո պայմանագիր կնքել 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «Մեդպրո» ՍՊԸ-ի հետ:

2-րդ չափաբաժնով պահանջվող ապրանքի անվանումն է՝ **«Կարտրիջ BG8»:**

**«Կարտրիջ BG8»**-ը հանդիսանում է **բժշկական նշանակության ապրանք**:

«Կարտրիջ BG8»-ը նախատեսված է հիվանդների արյան մեջ էլեկտրոլիտների և գազերի pH, pCO2, pO2, Na+, K+, Cl-,Ca++, Hct որոշման համար: Այս մասին նշված է ապրանքի տեխնիկական անձնագրում, որը կցված է բողոքարկման փաստաթղթերին:

**«Կարտրիջ BG8»**-ի արժեքը, որը հանդիսանում է բժշկական նշանակության ապրանք, ըստ հարկային օրենսգրքի, ազատված է Ավելացված արժեքի հարկից՝ (հիմք. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ, 5 հոկտեմբերի 2017 թվականի N 1317-Ն ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻՑ ԱԶԱՏՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 4-րդ, 6-րդ և 12-րդ կետերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է*:

Հավելված N 3
**ՀՀ կառավարության 2017 թվականի**
**հոկտեմբերի 5-ի N 1317-Ն որոշման**

5. Բժշկական տեխնիկա են համարվում՝

2) ներմուծվող այն տեխնիկան և սարքերը, որոնց ուղեկցող փաստաթղթերում (տեխնիկական անձնագիր, հաշվարկային և բեռնառաքման այլ փաստաթուղթ) նշված է, որ դրանք նախատեսված են բժշկական օգնության և սպասարկման համար):

ՍԵԽԱՍՏԱԿՈՎՎԱԾ
ՄՏԻՑ N Ի-28825-20
5 24.07 20 20

"ՓԻՆՔ ՖԼԱՄԻՆԳՈ Գ և Ա Կենտրոն"
ՍՊԸ
Բժշկական, լաբորատոր և անալիտիկ սարքավորումներ

"PINK FLAMINGO B & H Center"
LTD
Medical, laboratory and analytical equipment

Սարյան փող. 1ա, բն.3, Երևան 0002, ՀՀ: Հեռ./ֆաքս. (+374-10) 539046, E-mail: mels@arminco.com
1a, Saryan str., apt. 3,Yerevan 0002, Armenia. Tel/fax: (+374-10) 539046, E-mail: mels@arminco.com
URL: http://www.spyur.am/pinkflam.htm

Սակայն, «Մեդպրո» ՍՊԸ –ի կողմից ներկայացված գնային առաջարկում 2-րդ չափաբաժնի մասով, որը հանդիսանում է բժշկական նշանակության ապրանք (**«Կարտրիջ BG8»**), տեղի է ունեցել օրենքի խախտում:

Մասնակիցը տվյալ չափաբաժնի համար գին ներկայացնելիս Ավելացված արժեքի հարկ այնուակում հաշվարկել է և ներկայացրել 20% հարկ,մինչդեռ համաձայն «Հավելված N 3 ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1317-Ն որոշման»՝ այն ազատված է ԱԱՀ-ից:

Գնի ներկայացման օրենքի խախտմամբ այս ձևը հնարավորություն է տվե մասնակցին, որպեսզի նրա առաջարկած «առանց ԱԱՀ-ի արժեքը» ցածր լինի մեր կողմից ներկայացված «ընդհանուր արժեքից», որի արդյունքում նա ճանաչվել է հաղթող մասնակից, չնայած այն հանգամանքին, որ նրա ներկայացրած «ընդհանուր գինը» ավելի բարձր է, քան մեր ներկայացրած «ընդհանուր գինը»:

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

1.Պարտավորեցնել ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ - 2020/18 ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովին դադարեցնել 22.07.2020թ թիվ 1 որոշմամբ «Մեդպրո» ՍՊԸ–ին 2-րդ չափաբաժնի մասով հաղթող մասնակից ճանաչելու որոշումը:
2. Պարտավորեցնել ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ - 2020/18 ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովին դադարեցնել 2-րդ չափաբաժնի մասով Մեդպրո ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը:
3. Քննարկել մեր ընկերությանը 2-րդ չափաբաժնի մասով հաղթող մասնակից ճանաչելու հնարավորությունը:
Կից ներկայացնում եմ

1. Պետական տուրքի անդորրագիրը
2. Ընկերության պետական ռեգիստրի վկայականի պատճենը
3. Անձնագրի պատճեն
4. «Կարտրիջ BG8»-ի տեխնիկական անձնագիրը
5. «Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելվածները
6. «Մեդպրո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելվածները
7. Առոիր՝ 18 թերթ

Հարգանքով՝

Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն ՍՊԸ
Տնօրեն՝ Մելսիկ Բաղդասարյան

Բանկային տվյալներ՝
Արդշինբանկ ՓԲԸ, «Կասկադ» մասնաճյուղ
Հ/Հ 2474500372020000

հեռ.՝ 010 53 90 46, 091 214 176

24.07.2020թ